ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆՑԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶՎԻ ՊԱԹՈԼՈԳԻԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ

ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Անհիշելի ժամանակներից մարդն ուսումնասիրում է իրեն ակամա տրված իրականությունը: Մարդկային զգայարանները ապահովում են այդ իրականության շոշափելի սահմանների որոնում-բացահայտումը, իսկ շոշափելիի սահմաններից դուրս գալու բացառիկ սովորություն ու հատկություն ունեցող մարդկային միտքը հնարավորության դեպքում անցնում է զգայարանների շնորհիվ բացահայտված սահմանները՝ այդպիսով անընդմեջ ընդլայնելով մարդու՝ որպես մտածող էակի ներքին տարածությունը: Եթե շոշափելի սահմանների որոնումն ու բացահայտումը կարող են որոշակի ֆիզիկական դրդապատճառներ և ստիպողականություն ունենալ (մի անջուր տարածության մեջ հայտնված մարդը, օրինակ, ծարավի սուր զգացողությունից դրդված, փորձում է ծարավը հագեցնելու միջոցներ գտնել), ապա մտածական նշված որոնումները պարզապես թելադրված են մարդու յուրահատուկ ներքին տարածությամբ, որը անընդմեջ ընդլայնվելու պահանջ ու հակում ունի: Ինչպես մարդու ֆիզիկական ձևի և իրականության միջև կամուրջը զգայարաններն են, այդպես էլ ներքին տարածության և օբյեկտիվ իրականության միջև կամուրջ է միտքը: Մարդը մտածում է, քանի որ դրա հնարավորությունն ունի[1], և այդ հնարավորությունը մտքի թռիչքն ուղղում է դեպի արտաքին իրականությունից անդին՝ սովորաբար մի ինչ-որ բացարձակի, ինչ-որ միակ կատարելության բացահայտման, որը հնարավոր չէ գտնել շոշափելի իրականության մեջ, քանի որ ակամա տրված իրականությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ միակ կատարելությունից սերած բազմաբղետ տարրերի բարդ համակարգ, այն «ավելի շատ գոյության ինչ-որ կեցություն է, քան հենց ինքը՝ գոյությունը, ...այն հնարավորություն է դեպի բացարձակը»[2]: Բացարձակ նախատիպի որոնման գործընթացը անդրանցումն է (տրանսցենդենցիա), որը առարկայի «ինքնությունն է սահմանում»[3], և որի արդյունքը անդրանցված միավորն է, և որը անպայմանորեն վերբնական է, այսինքն՝ այնպիսին, որ հնարավոր չէ ընկալել զգայապես, հակառակ դեպքում գործ կունենանք ընդամենը օբյեկտիվ իրականության մինչ այդ չբացահայտված ինչ-որ հատվածի

[1] Տե՛ս **Хайдеггер М.** Разговор на проселочной дороге. М., 1991, էջ 134:
[2] **Хайдеггер М.** Что такое метафизика. М., 2007, с. 189.
[3] Նույն տեղում, էջ 185:

հետ։ Այլ կերպ ասած՝ անդրանցումը ըստ էության տվյալ տարրի գոյաբանական (էքզիստենցիալ) ձևի միջոցով դրա երևութաբանական (ֆենոմենոլոգիական) ձևին հանգելն է։

Օբյեկտիվ իրականության սահմաններից դուրս գալը հույս կամ պարզապես ցանկություն է՝ դարձյալ հանգելու այն բացարձակին, որից սերել է զգայապես ընկալելի իրականությունը։ Եթե իրականության ֆիզիկական ընկալման ու ճանաչման նպատակը մարդու ֆիզիկական հարմարավետությունն ապահովելն է, ապա մտքի այստեսակ թռիչքի նպատակը թերևս մտավոր հարմարավետությունն ապահովելն է՝ մարդու էությունը իրականության էությանը կապելը։

Անդրանցումը՝ որպես հասկացություն, սկիզբ է առնում Կանտի՝ նոումենների փիլիսոփայությունից, զարգանում Կարլ Յասպերսի էքզիստենցիալիստական փիլիսոփայության մեջ և կայանում Հուսերլի երևութաբանության մեջ՝ վերածվելով երևույթի ուսումնասիրության առանցքային հասկացության։ Տվյալ հասկացության բարդությունն ու գրավչությունը պայմանավորված են նրանով, որ այն ենթադրելի կիրառելիություն ունի ցանկացած այնպիսի երևույթի նկատմամբ, որն օժտված է որոշակի սահմաններով։ Սա դրդում է մտածելու, որ իրականությունը բաղադրող բոլոր իրերին բնորոշ է սեփական սահմաններից դուրս գալու հատկությունը։ Եվ եթե «անդրանցումը նշանակում է գերազանցում»[4], ապա իրականության որևէ հատվածի սեփական սահմաններից ինքնուրույնաբար դուրս գալու ընդամենը տեսական հնարավորությունը կարելի է անվանել ինքնագերազանցում։ Անդրանցումը հնարավոր է միայն որպես մարդու ճանաչողական գործընթացի տարատեսակ։

Սակայն որքան էլ պարադոքսային լինի, ոչ բոլոր երևույթները կարող են իրենց օղակած սահմաններից անդին անցնելու հատկությամբ օժտված լինել։ Անդրանցում չեն կարող թույլ տալ մարդու կողմից հորինված երևույթները, և կարելի է դրան զուգահեռ ասել, որ անդրանցում հնարավոր է իրականության մեջ օբյեկտիվորեն տրված երևույթների շարքում, այնպիսի երևույթների, որոնք ոչ թե գոյություն ունեն մեկ կամ մի քանի անհատների համար, այլ համընդհանուր կերպով կիրառելի և ճանաչելի են մարդ տեսակի համար ընդհանրապես։ Տվյալ երևույթի՝ զգայապես ճանաչված կամ ճանաչելի և ընկալված կամ ընկալելի սահմաններից դուրս գալու ընդունակությունը կամ պոտենցիալը անդրանցայնություն է։ Անդրանցմանը կարելի է երկակի մոտեցում ունենալ՝ կախված դիտարկվող երևույթի գոյության ձևից։ Եթե տվյալ երևույթը որևէ վերացություն է, ապա անդրանցումը դրա էության սուբյեկտիվ ընկալումից անցումն է այդ էության օբյեկտիվ գոյությանը։ Այսինքն՝ որևէ երևույթ, որը գոյություն ունի որպես օբյեկտիվ իրականություն և ընկալված է սուբյեկտի կողմից (սուբյեկտիվացած է),

[4] Նույն տեղում, էջ 183։

անդրանցվելիս նախ պետք է վերադառնա իր օբյեկտիվ գոյությանը, ապա այդ օբյեկտիվ գոյությունից դուրս գա՝ հանգելով բացարձակ գոյության: Այլ կերպ ասած՝ անդրանցումը որևէ վերացական հասկացության անհատական ընկալումից ընդհանուրին հանգելն է: Տվյալ դեպքում անդրանցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփական մտածողության, պատկերացումների և ընկալման սահմանից անդին անցնելը: Իսկ եթե դիտարկվող երևույթը առարկայական, նյութական կամ փորձով ընկալելի է, ապա անդրանցումը տվյալ երևույթի ֆիզիկական սահմաններից դուրս գալը և դրա էությանը հանգելն է:

Բնական հարց է առաջանում՝ արդյոք բացարձակ գոյությունը սահմանազո՞ւրկ է: Եթե այն ունի որևէ իմաստով սահմաններ, նշանակում է, որ դարձյալ անդրանցման հնարավորություն ունի, և ուրեմն անդրանցումը անընդհատ գործընթաց է, իսկ եթե բացարձակ գոյությունը սահմանազուրկ է, չի՞ նշանակում արդյոք, որ անդրանցված բացառապես բոլոր երևույթները մի վերջնական փուլում և ոլորտում «դատապարտված» են իրենց գոյությունը շարունակելու միախառնված: Միախառնումը կարելի է երկու տեսակի պատկերացնել, մեկ՝ էությունների ներդաշնակ համաձուլվածք, մեկ՝ պարզագույն քաոս: Բնականաբար, առաջին հայացքից տարօրինակ է խոսել վերացականության սահմանների մասին, բայց կարծում ենք՝ եթե մի որևէ վերացականություն տարբերակելի է մեկ այլ վերացականությունից, ապա պարզ է, որ դրանց միջև ինչ-որ տարանջատող գիծ կա, այլապես մարդկային կենսակերպի հիմնարար հասկացությունները հակադրամիասնություններով հանդես չէին գա (լավ - վատ, բարի - չար, ճիշտ - սխալ և այլն): Ապացույցը ձևակերպում ենք մարդուն զգայարաններով անհասանելի իրականության հարթակում, բայց միանգամայն հնարավոր ենք համարում նաև անդրանցված ոլորտում: Ասել կուզի՝ անդրանցային ոլորտում իրականության առանձին տարրերի բացարձակ գոյությունները չեն միաձուլվում մեկ ամբողջական ներդաշնակության մեջ, այլ իսկապես ձևավորում են քաոս, բայց այնպիսին, որը բաղկացած է միեղեն տարրերից, այսինքն՝ այդ քաոսը կազմող ոչ մի տարր մյուսի կրկնությունը կամ նույնիսկ նմանությունը չէ:

Տվյալ պահին մեր դիտարկման կենտրոնում լեզուն է, որի՝ որպես իրականության բաղադրատարրի գոյությունը յուրահատուկ է: Որպես գոյություն այն յուրահատուկ է այնքանով, որ, ի տարբերություն իրականություն բաղադրող այլ տարրերի, օժտված է գոյաձևի փոփոխության հատկությամբ: Այսինքն՝ օբյեկտիվ տարածության մեջ այն միանգամայն նյութաֆիզիկական ամբողջություն է, իսկ սուբյեկտիվ ներքին տարածություններում այն բառացիորեն սուբյեկտիվ է և, որքան էլ նույնաբանության տպավորություն ստեղծվի, մտածողության պես մտքային՝ մտքատիպ: Տարակարծությունը կանխելու հույսով ընդգծենք, որ եթե իրական-նյութական տարրերը՝ առարկաները, ընկալողական գոր-

ծընթացում զրկվում են իրեղեն ձևաբովանդակայնությունից և, որպես սուբյեկտիվ ներքին տարածության բաղադրիչ, իրենց գոյությունը պահպանում հասկացությունների ձևով (այդպիսով փաստորեն վերածվելով ընդամենը առարկաների պատճենների՝ իրենց «բնօրինակը» թողնելով օբյեկտիվ տարածության մեջ), ապա լեզվական նշանները օբյեկտիվ իրականությունից ընկալվելիս (ասենք՝ հաղորդակցական գործընթացի ժամանակ այս կամ այն տեղեկատվությունը խոսակցից ստանալիս) ոչ թե առարկայականությունից զրկվում և պարզապես պատճենվում են (գուցե ճիշտ է՝ ներպատճենվում) իրականությունից անհատական ներքին տարածություն, այլ բառացիորեն վերափոխվում են՝ իրի հնչյունային կամ տառային (կախված բանավոր կամ գրավոր արտահայտչաձևերից) անվանումից վերածվելով տվյալ իրի ձևազրկված հասկացության միակ գոյաձևի՝ որակապես հավասարվելով և հարմարվելով ներքին տարածության որակին՝ նյութականից կերպարանափոխվելով գաղափարականի և փաստորեն գրեթե նույնանալով նոեմայի[5] հետ: «Գրեթե», որովհետև եթե նոեման որպես վերացական ձև պարունակում է իմաստը[6], ապա լեզվական նշանակիչն էլ, մտային տարածության մեջ ընդամենը ձևով նույնանալով նոեմայի հետ, իրականում ընդգրկում է այն՝ որպես իր հերթին իմաստի վերացական ձև:

Լեզուն, անտարակույս, իր օբյեկտիվ գոյությամբ նյութական է՝ սկսած այն բանից, որ լեզվական նվազագույն համարվող միավորները՝ հնչյունները, միանգամայն ֆիզիկական գոյություններ են, վերջացրած նրանով, որ լեզվական ցանկացած կառույց՝ նախադասությունից մինչև երկխոսություն և գեղարվեստական տեքստ[7], ընկալելի ու ճանաչելի է զգայարաններով: Փաստորեն ինչպես ցանկացած այլ օբյեկտիվ իրական տարրի, այնպես էլ լեզվի անդրանցումը սկսվում է այդ ֆիզիկական սահմանների հատումով: Այդ անդրանցումը ենթադրում է կա՛մ հետդարձ դեպի այն կետը, որտեղից սերում է լեզուն, կա՛մ առաջընթաց դեպի այնտեղ, որտեղ միավորվում են նրա բոլոր դրսևորումները՝ որպես այնպիսի մի ամբողջ, որը տարասեռելն այդուհետ աննպատակ է: Ամեն դեպքում երկու հանգման կետերի գոյությունը պետք է որոնել լեզուն բոլորող պայմանականորեն շոշափելի սահմաններից դուրս,

---

[5] Նոեմայի մասին տե՛ս **Гуссерль Э.** Идеи к чистой феноменологии и феноменологической философии. Книга первая. Общее введение в чистую феноменологию. М., 2009, էջ 280 և հաջ.:

[6] Տե՛ս նույն տեղը, էջ 410:

[7] Երկխոսությունն ու գեղարվեստական տեքստը տվյալ դեպքում հավասարապես սահմանում ենք որպես տեքստի բարձրագույն դրսևորումներ, քանի որ ոճական և բովանդակային ընդգրկումներով դրանք ամենատարողունակն են, կարող են ներառել նույնիսկ գիտական, վարչական տեքստատեսակներ (նույնիսկ ընկերական ամենահասարակ զրույցի ընթացքում կարելի է բառացիորեն մեջբերել որևէ գիտական երկի հատված), ընդ որում՝ գեղարվեստական տեքստը կարող է ներառել երկխոսություն, իսկ երկխոսությունը կարող է ներառել գեղարվեստական տեքստ (օրինակ՝ երբ խոսակցության ընթացքում ինչ-որ բանաստեղծություն է արտասանվում):

այսինքն՝ պետք է գտնել հասանելի ֆիզիկականությունից դուրս մի վերացականություն։

Լեզուն կարելի է բնորոշել հետևյալ կերպ. օբյեկտիվ իրականության (որպես ինքնակարգավորվող համակարգ) հարաբերականորեն ներփակ օբյեկտիվ բաղադրիչային համակարգ (որն էլ իր հերթին է ինքնակարգավորվող)[8] կամ կարելի է ասել՝ մեգահամակարգ, որը, ինչպես ընդհանրապես օբյեկտիվ իրականությունը, ընկալողական գործընթացի արդյունքում անհատականացող, տարբերակայնություն դրսևորող փոքրագույն համակարգերի, կարելի է ասել՝ նանոհամակարգերի ամբողջություն է։ Ըստ այդմ՝ նախ առանձնացնենք լեզվի նեղ և լայն ըմբռնումներ ու դրանց համապատասխան՝ երկու ընդգրկումներ։ Նեղ ընդգրկումով՝ լեզուն կանոնարկված, օրինաչափ մեծ ու փոքր կառույցների ինքնիրեն առաջացած ամբողջություն է։ Լայն ընդգրկումով՝ լեզուն՝ որպես ամբողջություն, ներառում է լեզվական ոչ նորմալ, աղճատված կառույցները նույնպես։ Այդ աղճատված կառույցները կամ լեզվի պաթոլոգիական դրսևորումները որքան էլ դուրս մնան լեզվի առողջ դրսևորումների խմբավորում-համակարգումից, միևնույնն է, դրանք չեն դադարում լեզվի դրսևորումներ լինելուց։ Հակառակը պնդելը երկու պարզագույն անհեթեթություն կարող է առաջ բերել՝ կա՛մ հերքել, որ այդ խոսքաձևերը կրողները նույնպես մարդիկ են, կա՛մ ապացուցել, որ այդ մարդիկ իրենց ներքին աշխարհի արտահայտությունը ամենևին էլ լեզվական տարրերով չեն կազմում (ասենք՝ եթե շիզոֆրենիայով տառապող մարդը բովանդակային կամ քերականական պլանում տրամաբանորեն անհեթեթ տեքստում ասում է «ծաղիկ», դա ոչ թե գոյական է, այլ ոչ լեզվական միավոր, և կամ այդ գոյականը գործածողը մարդ ցեղատեսակից չէ)։ Այնպես որ, թեև պաթոլոգիական դրսևորումները սկզբունքորեն հնարավոր չէ խմբավորել լեզվական օրենքների հիման վրա, բայց դրանք լեզվի դրսևորումներ են[9]։

Փաստորեն լեզվի համակարգային ամբողջությունների ծավալային ընդգրկումը հակադարձ համեմատական է այդ համակարգերի բաղադրատարրային ընդգրկմանը։ Այսինքն՝ լեզուն՝ որպես մեգահամակարգ, բաղադրատարրային միօրինակ, կանոնավոր դրսևորումների ամբողջություն է, իսկ որպես նանոհամակարգ՝ բաղադրատարրային եզակիության ամբողջություն։

---

[8] «Հարաբերականորեն» ներփակ, որովհետև, այնուամենայնիվ, լեզվական համակարգի մեջ տեղի ունեցող ցանկացած շարժ պայմանավորված է այդ շարժն ընդգրկող օբյեկտիվորեն գոյություն ունեցող համակարգի թեկուզև աննշան թվացող փոփոխությամբ։ Սա նշանակում է, որ լեզուն հնարավոր չէ արհեստականորեն փոփոխել, բայց այն կարող է բնական փոփոխությունների ենթարկվել՝ կախված արտաքին իրականության փոփոխություններից։

[9] Անառողջ խոսքի և շիզոու անառողջ խոսքի զուտ տեքստային համեմատությունը՝ կտրած այն կրողներից, առանց նկատի ունենալու դրանք կազմող, ներկայացնող անհատներին, ցույց է տալիս, որ դրանց տարբերակումը, իրոք, անհնար է։ Այդպիսի մի համեմատության օրինակ տե՛ս **Пашковский В., Пиотровская В., Пиотровский Р.** Психиатрическая лингвистика. М., 2015, էջ 48-51։

Եվ եթե լեզվական անդրանցմանն անդրադառնալիս որպես ելակետ վերցնենք լեզուն իր նեղ ընդգրկումով՝ որպես մեգահամակարգ, ապա չենք կարող պնդել, թե լիովին պարզել ենք լեզվի անդրանցայնության խնդիրը, քանի որ այդ ամբողջության մի ինչ-որ հատված պարզապես դուրս մնացած կլինի քննությունից։ Լեզվի՝ որպես օբյեկտիվորեն տրված երևույթի անդրանցայնության մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն լեզվական կառույցների առողջ դրսևորումները, այլ նաև դրանց բառացիորեն անառողջ տեսակները, այսինքն՝ մտածական ինչ-ինչ պատճառներով դրսևորվող անոմալիաները կամ պաթոլոգիական տիպերը՝ ձևաբովանդակային համապատասխանության անճշտություններով արտահայտվող խոսքը (օրինակ՝ օլիգոֆրենիկ խոսքը, աֆազիան, տարաբնույթ հոգեկան խանգարումներ ունեցողների խոսքը և այլն)։

Անդրանցումը նեղ ընդգրկումով լեզվական ամբողջի առումով հնարավոր է կանոնավոր կառույցների ընդամենը համակարգումով, խմբավորմամբ, հետո դրանից ստացված արդյունքը վերացարկելով մինչև մի վերջնական կետ։ Պաթոլոգիական դրսևորումների անդրանցումը, ի տարբերություն դրա, կարծում ենք, նշանակում է սահմանի ըստ էության կրկնակի հատում։

Առաջին հատումը կլինի այն, երբ այդ ոչ նորմալ ձևերը փորձենք համապատասխանեցնել նորմալներին՝ դրանք մեկ ընդհանուր սահմանի մեջ առնելու համար։ Սա նշանակում է լեզվի պաթոլոգիական դրսևորումները համապատասխանեցնել առողջ դրսևորումներին։ Դա հնարավոր է, եթե հիվանդ խոսքից վերցնենք միայն ձևը, այսինքն՝ տվյալ խոսքը դիտարկենք առանց այն կրողին նկատի ունենալու և առանց տվյալ խոսքի կրած բովանդակության և իրականության միջև ընդհանուր եզրեր փնտրելու։ Այլ կերպ ասած՝ եթե հիվանդ անհատի ասած «Ես գրիչ եմ» արտահայտությունը դիտարկենք զուտ որպես լեզվական որոշակի միավորների միություն՝ առանց անդրադառնալու դրա այսպես ասած արտալեզվական կապերի աղճատում-անճշտություններին, ապա պարզ է, որ «ես»-ը որպես բառ միանգամայն նույնական է առողջ անհատի խոսքում կիրառվող «ես»-ի հետ։ Ստացվում է, որ լեզվի պաթոլոգիական դրսևորումները կրկնակի անդրանցում են անցնում՝ ձևային և բովանդակային։ Այսինքն՝ ի տարբերություն նորմալ տեսակների՝ դրանց ձևն ու բովանդակությունը իրարից կտրված են անդրանցվում։

Ձևային պլանով ընդգրկվելով լեզվական ընդհանուր սահմանների մեջ՝ դրանք որպես մեկ միասնական լեզու առաջ են ընթանում դեպի պայմանականորեն շոշափելի սահմաններից դուրս՝ հանգելով միակ բացարձակ անտարրալուծելի նախասկիզբ-գոյությանը։ Իսկ բովանդակային պլանում դրանց անդրանցումը տեղի է ունենում հետընթաց ձևով։ Այսինքն՝ հիվանդ խոսքի բովանդակությունը, այդպես էլ մնալով հույժ անհատական և եզակի՝ անխմբավորելի և տրամաբանորեն անչափելի, ընդամենը մեկ անգամ միավորվելով առողջ տեսակների հետ,

դարձյալ հետ է ընթանում դեպի իր եզակիությունը։ «Ես գրիչ եմ» արտահայտության բովանդակությունը՝ որպես իր տեսակի մեջ եզակի մտածողության արդյունք (ի վերջո, այդ մտածողությունը շեղում է համարվում այն միակ պատճառով, որ մարդկանց ճնշող մեծամասնությունը սովոր չէ իրեն գրիչ համարել), այդպես էլ եզակի է մնում։ Տվյալ խոսքը անառողջ է համարվում այն պարզագույն պատճառով, որ իրականության հետ շփման միակ եզրը ընդամենը լեզվական նշաններից կազմված լինելն է։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ մի պարադոքսային փաստի. գեղարվեստական գրականության՝ առանց որևէ բացառության ցանկացած ստեղծագործություն ըստ էության իրականության հետ դարձյալ ոչ մի շփում չունի. նույնիսկ եթե այն հյուսված է իրական փաստերի հիման վրա, միևնույնն է, գրողը սեփական պատկերացումների ու երևակայության դրոշմը դնում է տվյալ ստեղծագործության վրա՝ դեռ չասած ամբողջովին հորինված կերպարների կամ այնպիսի դրվագների մասին, որոնք գրվում են առաջին դեմքով, և արդյո՞ք հորինված կերպարը որպես սեփական անձ ներկայացնելը ոչ մի ընդհանուր բան չունի իրեն «փողոց» համարողի հետ. ի վերջո, Ֆ. Կաֆկան, ի դեմս իր գրական հերոսի, հայտնում է աշխարհին, որ իր համար լաբիրինթոս է կառուցել՝ հարձակումներից պաշտպանվելու համար[10], իսկ եթե նույն պատմությունը լսենք մի «շարքային» անհատից, նրա բանականության ամրությունը կասկածի տակ կառնվի։ Բանն այն է, որ այսպես ասած շարքային անհատի կողմից ներկայացվող նման պատմությունը ցուցիչ է այն բանի, որ տվյալ անհատի մտային տարածության մեջ կա՛մ խաթարված է, կա՛մ լիովին բացակայում է «գիտակցության ավելի բարձր ոլորտը՝ ինքնագիտակցությունը»[11], ինչի հետևանքով նշված տիպի խոսքը իրականության նրա ընկալումն է որ կա, իսկ Կաֆկայի տվյալ տեքստը՝ այդ նույն իրականության ընկալման արդյունքում իրերի ու հարաբերությունների համեմատական վերլուծությունն է՝ դրված խոսքային բարձրագույն դրսևորման՝ մշակութային տեքստի շրջանակի մեջ։ Եվ այս է պատճառը, որ խոսքային բարձրագույն դրսևորումն ու խոսքի պաթոլոգիական դրսևորումը, չնայած նրանց միջև եղած պարադոքսային թվացող ընդհանրությանը, տարբեր կերպ են անդրանցվում։ Թեև լեզվական առողջ և պաթոլոգիական դրսևորումները անդրանցվելիս հատվում են լեզվի համապարփակ սահմաններում և ձևային պլանում միասնաբար են անցնում շոշափելի գոյության սահմանները, սակայն այդ երկու տեսակների դրսևորումների բովանդակային պլանները հատվում, բայց առանձին ճանապարհներով են շարժվում դեպի սահմանից անդին։

Ուրեմն պաթոլոգիական դրսևորումները ձևային պլանում ի վերջո կունենան սահմանից այն կողմ միակ բացարձակ նախասկիզբ, իսկ բո-

[10] Տե՛ս **Кафка Ф.** Лабиринт. СПб., 2011։
[11] **Меграбян А.** Очерки по психологии и психиатрии. Ер., 1984, с. 98.

վանդակային պլանում սահմանից անդին կստացվեն այդուհետ անտարբալուծելի միավորներ՝ քանակապես հավասար մինչև անդրանցումը օբյեկտիվ իրականության մեջ դրանք կիրառած անհատների քանակին:

Պաթոլոգիական և առողջ լեզվական դրսևորումների անդրանցումների միջև եղած նման տարբերությունը թերևս բացատրելի է նրանով, որ թեև լեզվական ատաղձը միևնույնն է մարդկային բոլոր անհատների համար, սակայն այդ ատաղձից ինչ-որ բան կերտող ամեն մտածողություն ինքնատիպ է: Պարզապես առողջ մտածողության գործունեության ընթացքն ու արդյունքը կարելի է «չափել» տրամաբանական տեսանկյունից, իսկ անառողջ որակվող մտածողությունը հնարավոր չէ ենթարկել համակարգային օրենքների, այսինքն՝ ստանալ դրանց հարացույցը կամ համակարգերը, ինչպես որ արվում է նեղ ընդգրկումով լեզվի հարթակում:

Թեև խոսքի նշված երկու դրսևորումները կրող տարբեր մտածողությունները երբեք չեն միավորվի մեկ ամբողջի մեջ, քանի որ իրական-նյութական տարածության ընկալման ձևերը բևեռային հեռավորություն ունեն միմյանցից, այնուամենայնիվ այդ մտածողությունների արտահայտչաձևերը միավորվում են «լեզու» կոչվող համակարգում և դրա սահմաններից անդին՝ այդպիսով նախ տեսականորեն, ապա վերացականորեն համախմբվելով:

Բանալի բառեր – *լեզվական մեգահամակարգ, լեզվական նանոհամակարգ, բացարձակ նախատիպ, բացարձակ գոյություն, ճանաչողություն, օբյեկտիվ իրականություն, անդրանցային ոլորտ*

СИРАНУШ ОГАНЕСЯН – *Трансценденция в патологических проявлениях языка.* – В статье на основе наблюдений делается вывод, что здоровые и патологические типы речи, объединяющиеся в общей системе языка, приобретают трансцендентность разными путями. В случае патологических проявлений, в отличие от здоровых, содержание и форма подвергаются транцендированию отдельно друг от друга. В формальном плане они в конечном счёте сводятся к абсолютному единству, а в плане содержания – к абсолютному множеству.

Ключевые слова – *языковая мегасистема, языковая наносистема, абсолютный прототип, абсолютная сущность, познание, объективная реальность, трансцендентная сфера*

SIRANUSH HOVHANNISYAN – *Transcendence in Pathological Forms of the Language.* – The article deals with the transcendence of unhealthy language forms. From observations, it is concluded that healthy and pathological types of speech, united in a common system of language, are transcended in different ways. In the case of pathological forms of language, unlike healthy ones, the content and form are transcended separately from each other. In the formal plan, they ultimately amount to an absolute unit, and in terms of content – to an absolute set.

Key words – *language megasystem, language nanosystem, absolute prototype, absolute essence, cognition, objective reality, transcendent sphere*